ԱԿՏԻՎ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

Ակտիվ լսողության կիրառման նպատակն է՝ երեխային ցույց տալ, որ նա լսված, հասկացված է, որ եթե նա նույնիսկ խնդիր ունի, ծնողը իր կողքին է, կիսում է իր անհանգստությունը: Երեխային ակտիվ լսել նշանակում է «վերադարձնել» երեխային իր ասածը այլ բառերով՝ նշելով նաև թաքնված զգացմունքը, պահանջմունքը:
Ակտիվ լսելու հմտությունները արտահայտում են ծնողի հարգանքը, հոգատարությունը և վերաբերմունքը երեխայի ներաշխարհի հանդեպ: Դա իր հերթին օգնում է երեխաներին ինքնաճանաչման գործընթացում, ինչպես նաև նպաստում է սեփական ուժերի հանդեպ հավատի ուժեղացմանը:

Օրինակ, երեխան նվնվում է, փնթփնթում, հրաժարվում է դասերն անելուց:
Ծնողը կարող է այս իրավիճակում պատասխանել.
-Ես հասկանում եմ, որ դու հոգնած ես, այս պահին չես կարողանում կենտրոնանալ դասերիդ վրա, այդ պատճառով փնթփնթում ես, անուշադիր ես:

Սա արդեն իսկ բավարար է երեխայի համար,որպեսզի դադարեցնի անցանկալի վարքը,

քանի այդ վարքի հիմնական նպատակը ուշադրության գրավելն է:

Սա ասելուց հետո, ծնողը կարող է դնել իր պայմանները՝ կարող ես հանգստանալ կես ժամ, հետո շարունակենք, հիմա կենտրոնացի, որպեսզի հետո կարողանաս անել քո ուզածը և այլն:

Ակտիվ լսողություն կիրառելու համար ծնողը պետք է ունենա մի դիրքորոշումներ՝ մի քանի հիմնային դիրքորոշումներ՝

- պետք է իրականում ցանկանա լսել երեխային, այսինքն՝ ժամանակ ծախսել լսելու համար
- պետք է իրապես ցանկանա օգնել երեխային
- պետք է անկեղծորեն ցանկանա ընդունել երեխայի զգացմունքները, նույնիսկ, եթե դրանք շատ տարբերվեն իր զգացմունքներից
- անհանգստացնող հույզեր և զգացմունքներ, հուզականան խառնաշփոթ (օրինակ՝ տագնապեցնող մտքեր կամ վրեժխնդրության ձգտում),
- պետք է ունենա վստահություն երեխայի, նրա ուժերի, կարողությունների հանդեպ
- պետք է կարողանա տեսնել երեխայի մեջ առանձին անձ `իր կյանքով, զգացմունքներով և այլ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: